

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

# لويس

LOUYS

*Armenian Monthly*

ISSN 1682-5446

## Այստեղ քեսաբ է

Հայոց աշխարհի հերթական  
գոհը



# 185, Մարտ 2014 թ. No 185, March 2014 ۱۳۹۳ فروردین ماه شماره ۱۸۵

# Այս համարում

## Հայերեն բաժին

1- Իրանահայ Համայնք.....	1
2- Հայաստան.....	2
3- Արցախ.....	10
4- Արեւմտյան Հայաստան.....	10
5- Միջազգային.....	14
6- Խոհեր.....	16
7- Գծանկարչություն.....	16
8- Հայերեն-պարսկերեն առածանի.....	16

## Պարսկերեն բաժին

1- Լուրեր.....	1-4
----------------	-----



**Շապիկի առաջին էջում՝** Քեսար

**Վերջին էջում՝** Լույս է տեսել Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 185, մարտ 2014 թ.

No. 185, March 2014

ماهنامه لویس - شماره ۱۸۵ فروردین ماه ۱۳۹۳

# ԼՈՒՅՍ

## Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

**Էդ. Բաղդասարյան**

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)

Ինտերնետային հասցեն՝ [www.louysonline.com](http://www.louysonline.com)

**LOUYS**

**Armenian Cultural and Social Monthly**

License-holder and Editor-in-Chief

**Ed. Baghdasarian**

[www.Edic-Baghdasarian.com](http://www.Edic-Baghdasarian.com)

**POBox 15875-9488 Tehran – Iran**

**E-mail : [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)**

**Internet : [www.louysonline.com](http://www.louysonline.com)**

**Թերթի Գինը՝** Հատվածառ - 5000 ռիալ

**Բաժանորդագրություն՝**

**Իրան՝** մեկ տարի՝ 60,000 ռիալ

**Արտասահման՝** մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են

չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին

պարտադիր է:

# Հայկական Քեսար. պատմական ակնարկ

Թուրքիայի աջակցությամբ մարտի 21-ի վաղ առավոտյան ահաբեկչական խմբավորումները Թուրքիայի Յալաղաղի անցակետից անարգել մտել են Միրիայի հայաբնակ Քեսարի շրջան եւ ուժգին հարձակումով գրավել Քեսարն ու հարեւան գյուղերը: Քեսարում սպրոդ մոտ 2000 հայեր, թողնելով ամեն ինչ, մի կերպ սպաստանել են մոտ 65 կմ հեռավորության վրա գտնվող Լաթաքիայում եւ սպասում են կառավարական զորքերի կողմից Քեսարի ազատագրմանը, որպեսզի վերադառնան իրենց տներ, թեւեւ հայտնի է դարձել, որ զինյալներն արդեն թալանել են հայերի տներն ու թալանածը տեղափոխել Թուրքիա:

Քեսարը գտնվում է Միրիայի հյուսիս-արեւմուտքում, Թուրքիայի հարավային Հաթայ նահանգին (Ալեքսանդրետի սանջակ) սահմանակից հատվածում: Քեսարը հնագույն բնակավայրերից է համարվում, սակայն հստակ տեղեկություններ չկան, թե հայերը կոնկրետ երբևէ այնտեղ են հաստատվել Քեսարում: Մի շարք աղբյուրներ նշվում է 13-14-րդ դարերը, իսկ որոշները՝ այն հասցնում մինչև Տիգրան Մեծի ժամանակներ:

1909-ի սպրիլյան ջարդերը, որոնք ընդունված է կոչել «Ադանայի կոտորածներ», հասել են նաեւ Քեսարի շրջան: Թուրք զինվորների դեմ Քեսարում դիմադրություն է կազմակերպվում, որից հետո բնակչությունը լքում է բնակավայրերը եւ հեռանում Լաթաքիա: Թուրքերը թալանել ու այրում են Քեսարի շրջանի հայկական գյուղերն ու բնակավայրերը: Հայտնի է, որ այդ ընթացքում մոտ 200 հայեր են զոհվել:

1915-ի ցեղասպանության ժամանակ Քեսարցիները որոշել էին դիմադրել եւ չհնազանդվել տեղահանության որոշմանը, սակայն չկարողանալով կազմակերպված դիմադրել՝ ենթարկվել են բռնի տեղահանությանը դեպի Հորդանան եւ Դեր-Չորի անապատներ: Հայտնի է, որ բռնի տեղահանվել են մոտ 8 հազար հայեր, որոնցից 5 հազար սպանվել են:

Անգլիացիները 1918-ին գրավել են Ալեքսանդրետի սանջակը, սակայն հանձնել են ֆրանսիացիներին, իսկ 1920-ին այն մտել է Ֆրանսիայի մանդատին հանձնված Միրիայի կազմի մեջ: 1938-ին ստեղծվել է Հաթայի ինքնավար պետությունը, սակայն 1939-ի հունիսի 23-ի պայմանագրով Ֆրանսիան Հաթայը նվիրեց Թուրքիային: Այդ ընթացքում Քեսարում ըմբոստություն է բռնկվել Թուրքիայի կազմ անցնելու դեմ, որից հետո Քեսար է այցելում Միրիայում եւ Լիբանանում Պապական նվիրակը, տեսնում հայության վիճակը եւ դիմում Հռոմի պապին: Այս ընթացքում կարելուք դերակատարություն է ունենում նաեւ կարդինալ Գրիգոր Պետրոս Աղաջանյանը եւ արդյունքում միայն Քեսարի շրջանը հետ է միացվում Միրիային, սակայն քեսարցիների հողատարածքները մնում են Թուրքիայի կազմում:

Մենք խստիվ դատապարտում են ոճազործ ահաբեկիչներին եւ նրանց հովանավորող Թուրքիային, ԱՄՆ-ի եւ Եվրոմիության իմպերիալիստական մեծ տերություններին, որոնք արդեն չորս տասնամյակ է, որ Միջին Արեւելքում իրենց իմպերիալիստական եւ ծավալապաշտական ծրագրերն են իրականացնում՝ որոնց արդյունքում զոհվել են միլիոնավոր անմեղ ժողովուրդ, տեղահանվել կամ գաղթել են մի քանի միլիոն խաղաղ բնակչություն, վաճառվել են մի քանի հարյուր միլիարդի հասնող զենքեր եւ արեւմտյան այլ իրեր, թալանվել են տեղական ժողովրդների ազգային հարստությունը եւ այլն:

իրանահայ Համայնք

Քաթրին Աշտոնը Սպահանի հայոց Ս. Ամենափրկչեան Վանքում

Սպահանի ՀՊՍ Առաջնորդարանի կայքէջ 11/03/2014



Երկուշաբթի՝ 2014 թվականի մարտի 10-ին, երեկոյան ժամը 4:30-ին, Եւրոմիության արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով գերագույն հանձնակատար Քաթրին Աշտոնը ժամանեց Նոր Ջուղայի ս. Ամենափրկչեան վանք: Ս.Ա. վանքում Քաթրին Աշտոնին եւ նրան ընկերակցող պատվիրակությանը՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգեն եպս. Չարյանի գլխավորությամբ, դիմավորեցին Ծահինշահիի համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունակյանը, Պատգամավորական ժողովի, Թեմական, Կրօնական եւ այլ մարմինների առեմնապետերը եւ ներկայացուցիչները:

Պատվիրակության անդամները նախ այցելեցին որմանկարներով զարդարված, 350-ամյա վաղեմություն ունեցող Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Հովսեփ Արեմաթացի» եկեղեցի, որտեղ Վանքի «Կոմիտաս» երգչախումբը խմբավարությամբ պրն. Արմեն Ամիրխանյանի հանդես եկավ ս. Պատարագից «Մարմին տերունական», «Զրիստոս ի մեջ մեր հայտնեցավ» եւ «Մուրբ, սուրբ» երգերով եւ իր ելույթն ավարտեց «Կիլիկիա» երգով: Տկն. Քաթրին Աշտոնը եւ պատվիրակության անդամները հիացմունքով ունկնդրեցին ս. Պատարագից երգված կտորները, սպա հմայված դիտեցին եկեղեցու գունազարդ որմանկարները, որոնք ներկայացնում են Հին ու Նոր կտակարանների ամբողջ պատմությունը, եկեղեցու խորհուրդները, Ս. Գրիգոր Լուսավորչի չարչարանքները եւ մանավանդ Դրախտ-Դժոխք սքանչելի պատկերը:

Այնուհետեւ պատվիրակության անդամները բարձրացան Վանքի Ծաղկյալ դահլիճ, ուր առաջնորդ Սրբազանը բարի գալստյան խոսք արտահայտելով հյուրին եւ պատվիրակության մյուս անդամներին, անդրադարձավ իրանահայության կյանքին ու նրանց ունեցած առավելություններին ու իրավունքներին: Բացատրեց թե ինչպիսի կազմակերպ համայնքներ են, եւ որ ինչպիսի ակտիվ կյանք են վարում հոգեւոր, ազգային ու մշակութային ոլորտներում: Նա մատնանշեց կառավարության հետ սերտ հարաբերությանը եւ ներկայացրեց Իրանը որպես համագոյակցության երկիր եւ նշեց, որ 400 տարիներից ի վեր հայերը, որպես քրիստոնյաներ, իսլամ եղբայրների ու քույրերի հետ ապրել են հարգանքով եւ սիրով: Սրբազան Հայրը շնորհակալություն հայտնեց Եւրոմիության խորհրդարանին Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կապակցությամբ, միաժամանակ անդրադարձավ Եվրոպայի դատարանի կողմից դատապարտված թուրք գործիչ Դոդու Փերինչեքի արդարացման վճռին, հիշեցնելով, որ մեկ ամիս առաջ Մեծի տանն Կիլիկիո Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսը, մի նամակով բողոքարկել է Եվրոպայի դատարանին՝ ընթերցելով Վեհափառ Հայրապետի նամակից մի հատված:

Սրբազան Հայրն իր խոսքի շարունակության մեջ կարեւորությամբ ընդգծեց, որ Իրանի պետությունը միշտ գորակցել է մեզ՝ մեր եկեղեցիների ու մշակութային կոթողների պահպանման գործում, մինչդեռ սրանից մի քանի տարի առաջ հարեւան Ադրբեջանում ագերիներն ավերեցին Հին Ջուղայի պատմական արժեք ներկայացնող խաչքարերը, որն ինքնին մշակութային

ցեղասպանություն է: Թեմակալ Առաջնորդն ավարտելով իր արտահայտությունները՝ հույս հայտնեց, որ Եւրոխորհրդարանը կբարձրաձայնի այս մասին, կճանաչի մարդկային իրավունքները եւ կդատապարտի նման արարքները, որպեսզի այլեւս չթույլատրվեն նման ցեղասպանությունների շարունակությունը այլուր:

Սրբազան Հոր խոսքերից հետո արտահայտվեց Տկն. քաթրին Աշտոնը, վստահեցնելով, որ անպայման հետևելու եւ պաշտպանելու է մարդկային իրավունքները եւ ներկայացված խնդիրները:

Պաշտոնական հանդիպման ավարտին առաջնորդ Սրբազան Հայրը հանուն ազգային իշխանության հուշանվերներ հանձնեց Քաթրին Աշտոնին: Ապա պատվիրակության անդամներն այցելեցին ս. Ամենափրկչեան վանքի «Խաչատուր Կեսարացի» անվան թանգարանը, որտեղ առաջնորդ Սրբազան Հայրը Հայոց ցեղասպանության տաղավարի առջև երկար բացատրություններ տալով իրագործված ոճրի վերաբերյալ, քարտեզի վրա ցույց տվեց այն վայրերը, որտեղ իրագործվել են Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաեւ Դեր-Չորից բերված նահատակների աճյունների բեկորները, այնուհետեւ շրջելով թանգարանում՝ ներկայացրեց 10-րդ դարից մինչեւ 18-րդ դարի ձեռագրերը, եկեղեցական սպասները, յուղաներկ պատկերներն ու զանազան այլ արժեքավոր ցուցանմունքները: Սրբազան Հայրը հատկապես անդրադարձավ անգլիական տպամեքենային, որը ս. Ամենափրկչեան վանքում աշխատած երրորդ տպամեքենան է եղել, նաեւ խոսեց Խաչատուր վրդ. Կեսարացու մասին, ով՝ իր եւ իր գործակիցների ջանքերով, ս. Ամենափրկչեան վանքում հիմնադրել է Իրանի եւ Միջին Արեւելքի առաջին տպարանը:

Վերջում հարգելի հյուրը գրառում կատարեց թանգարանի հուշամատյանում, այնուհետեւ թանգարանի մուտքի առջև պատվիրակության անդամներն առաջնորդ Սրբազան Հոր եւ ազգային մարմինների հետ հավաքական լուսանկարվելուց հետո, հրաժեշտ տվեցին:

Երվանդ Օտյանի «Ընկեր Բ. Փանջունի»-ն պարսկերեն

Araxnews 27/01/2014



Թեհրանում, «Օֆոդ քեթաթ» հրատարակչության կենտոնական գրախանութում կայացավ հայ անվանի գրող Երվանդ Օտյանի «Ընկեր Բ. Փանջունի» գրքի պարսկերեն թարգմանության շնորհանդեսը:

Գիրքը թարգմանել է Անդրանիկ Խեչումյանը, շապիկը գծագրել է Քիանուշ Ղարիբփուրը, հրատարակվել է 1500 տպաքանակով, «Օֆոդ քեթաթ» հրատարակչության կողմից:

Հիշատակենք, Օտյանի ստեղծագործությունները ցայժմ թարգմանվել են ռուսերեն, ֆրանսերեն, բուլղարերեն, հունարեն, թուրքերեն, ալբաներեն և այլ լեզուներով:

Օտյանի պիեսները բազմիցս բեմադրվել են Հայաստանի և Սփյուռքի թատրոններում, իսկ «Ընկ. Բ. Փանջունի» վեպի հիման վրա նկարահանվել է «Ընկեր Փանջունի» (1992 թ., ռեժիսոր՝ Արման Մանարյան), «Գեղծ լրտեսը» պատմվածքի մոտիվներով՝ նույնանուն (1966 թ., ռեժիսոր՝ Չենրիկ Մալյան, երկուսն էլ Հայֆիլմ) կինոնկարները:

## Հայաստան

### Քեսաբի նոր դեպքերը

**Մարտի 22, 2014**

Թուրքիայի հետ սահմանակից Սիրիայի հայաբնակ Քեսաբի ուղղությամբ ահաբեկչական Ալ-Նուսրա խմբավորման ջոկատները իրականացրել են 4 թեւից հարձակում: Թուրքական Gercekgundem կայքի փոխանցմամբ՝ մարտի 21-ի վաղ առավոտյան ահաբեկչական Ալ-Նուսա խմբավորման ջոկատները 4 կողմերից լայնածավալ հարձակման են անցել Սիրիայի հյուսիսում հայերով եւ այլ լիներով բնակեցված Լաթակիայի շրջան: Նշվում է, որ ահաբեկիչների 2 խոշոր խմբեր հարձակման են անցել Թուրքիայի տարածքից: Թուրքական կայքը նշել է, թե Սիրիայի կառավարական գործերին հայտնի է, որ հետ մղել ահաբեկիչների հարձակումները:

### Հայաստանի դեսպանը ԵԱՀԿ մշտական խորհրդում ներկայացրել է Քեսաբի վիճակը



**Մարտի 28, 2014**

Թուրքիայի տարածքից ահաբեկչական խմբավորումների կողմից հայաբնակ Քեսաբի վրա տեղի է ունեցել հարձակում, որի արդյունքում տարհանվել է քաղաքի բնակչությունը: Այդ մասին մարտի 27-ին ԵԱՀԿ Մշտական Խորհրդի հանդիպմանը հայտարարել է Հայաստանի մշտական ներկայացուցիչ, դեսպան Արման Կիրակոսյանը՝ հայտարարություն անելով Քեսաբի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ: Խորը մտահոգություն հայտնելով Սիրիայի հյուսիս-արևմուտքում իրադրության կտրուկ սրման կապակցությամբ՝ «Հ դեսպանը նշեց, որ Թուրքիայի տարածքից ահաբեկչական խմբավորումների կողմից հայաբնակ Քեսաբի վրա տեղի է ունեցել հարձակում, որի արդյունքում տարհանվել է քաղաքի բնակչությունը: Դեսպան Կիրակոսյանը ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ ծայրահեղական խմբերի կողմից բնակիչների սեփականությանը հասցվել է զգալի կորուստներ, վնասվել են հայկական եկեղեցիները:

### Ազատամարտի վետերանների միությունը արտահերթ խորհրդակցություն է հրավիրել՝ Քեսաբ դեպքերի հետ կապված

**Մարտի 28, 2014 թ.**

Ազատամարտի վետերանների միությունը հրավիրել է արտահերթ խորհրդակցություն, կապված՝ Սիրիայի Քեսաբ համայնքում տեղի ունեցած վերջին իրադարձությունների հետ: Նրանց տարածած հաղորդագրության մեջ ասվում է.

«Ազատամարտի վետերանների միությունը իր խորը զայրույթն ու ցասումն է արտահայտել կատարվածի առնչությամբ եւ խստորեն դատապարտել Քեսաբի խաղաղ բնակչության նկատմամբ ծայրահեղականների իրականացրած ահաբեկչական գործողությունները: Թուրքական զինուժի գործողությունների պատճառով տեղաբնակ հայությունը տարհանվել է, ավերվել եւ հրկիզվել է նրանց բնակատեղիները: Յեղասպանությունից մոտ մեկ դար անց մագապուրծ եղած հայերը, որոնց մի մասը 1915թ հետո ձեւավորվել էր Սիրիայում՝ կրկին բռնել է գաղթի ճանապարհը: Ազատամարտի վետերանների միությունը իր գորակցությունն է հայտնում Սիրիայում գտնվող հայ բնակչությանը եւ թուրքական իշխանություններից պահանջում անհապաղ դադարեցնել հայազգի բնակչության նկատմամբ անմարդկային ոտնձգությունները. «Կոչ ենք անում հայկական սփյուռքին համախմբվել եւ բողոքի ակցիաներ կազմակերպել ի նշան թուրքական զինուժի գործողությունների. Կոչ ենք անում միջազգային կազմակերպությունների դատապարտել տեղի ունեցածը եւ ձեռնարկել համապատասխան միջոցներ խաղաղ բնակչության տարհանման, նրանց բնակատեղիների ոչնչացման ուղղությամբ»:

### Հայոց երկու կաթողիկոսները քննարկել են Քեսաբում ստեղծված իրավիճակը



**Մարտի 25, 2014թ.**

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն, մարտի 24-ին, հեռախոսագրույց է ունեցել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի հետ՝ Քեսաբի եւ շրջակա բնակավայրերի բռնագավթման առնչությամբ, որի հետևանքով տարհանվել է քաղաքացիական բնակչությունը, մեծավ մասամբ հայ բնտանիքներ, ավերվել եւ հրկիզվել են տներ, պղծվել սրբավայրեր: Գարեգին Բ-ն իր խորը մտահոգությունն է արտահայտել կատարվածի առնչությամբ եւ դատապարտել Քեսաբի խաղաղ բնակչության նկատմամբ ծայրահեղականների իրականացրած ահաբեկչական գործողությունները, որոնք աջակցություն են ստացել Թուրքիայի կողմից: Զրույցի ընթացքում նա իր գորակցությունն է հայտնել Արամ Ա Կաթողիկոսին: Քեսաբում ստեղծված կացության վերաբերյալ Գարեգին Բ-ն հեռախոսագրույց է ունեցել նաեւ Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանի հետ: Գարեգին Բ-ն Մայր Աթոռում հրավիրված խորհրդակցության ընթացքում հաստատել է, որ Սուրբ Էջմիածինը աշխարհասփյուռ իր թեմական կառույցներով

շարունակելու է իր աջակցությունը սիրիահայությանը՝ աղոթելով, որ խաղաղությունը վերահաստատվի Միրիայի աստվածասեր ժողովրդի կյանքում, եւ տեղահանված ու գաղթական ընտանիքները վերադառնան իրենց հայրենի օջախները:

NEWS.am

## «Libération». Քեսաբի վրա հարձակումը տեղի է ունեցել Թուրքիայի մասնակցությամբ

Մարտի 29, 2014թ.

NEWS.am-ը զգալի կրճատումներով ներկայացնում է վերլուծաբան Ժան-Պիեր Պերենի հաղվածք, որը հրապարակվել է ֆրանսիական «Libération»-ում:

Առաջին անգամ սիրիացի ամպատամբները Միջերկրական ծով հասան: Հարձակումը նրանց թույլ տվեց գրավել մի քանի քաղաքներ ու գյուղեր, այդ թվում նաեւ Թուրքիային սահմաններ՝ Քեսաբ գյուղը: Քեսաբը մեկն է այն քիչ բնակավայրերից, որտեղ բնակվում են 1915թ.-ի ապրիլից 1916թ.-ի հուլիսն ընկած ժամանակահատվածում թուրքական իշխանությունների կողմից կազմակերպված հայոց ցեղասպանությունից փրկված հայեր:

Դատելով ամենից՝ հենց «Ջերիաթ ան-Նուսրիի» գրոհայինները Թուրքիայում գործողությունն են անցկացրել, ինչը նշանակում է Անկարայի մասնակցությամբ: Այս անգամ «Libération»-ի տվյալներով նրանք, հավանաբար, օգտագործել են մի քանի տանկ, որոնք ամենայն հավանականությամբ տրամադրվել են Սաուդյան Արաբիայի կողմից, ինչը կարող է շրջադարձային կետ դառնալ այս պատերազմում:

Իր կողմից սիրիական իշխանությունները հաստատել են, որ ապստամբները դաշնակից ջիհադիստների հետ եկել են Թուրքիայից իրենց շրջանը հարձակման ենթարկելու համար: Երկուշաբթի գրանցվել է Թուրքիայի ռազմաօդային ուժերի եւ սիրիական հակաօդային պաշտպանության ինքնաթիռների բախման նվազագույնը 12 դեպք նույն այդ սահմանի երկայնքով, որից հետո թուրքական կործանիչը հարվածել է սիրիական ինքնաթիռի:

## Հայկական պատվիրակությունը հանդիպել է ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի ներկայացուցիչների հետ Քեսաբի հարցի կապակցությամբ

Մարտի 29, 2014թ.

Ամերիկային հայ համայնքի ներկայացուցիչների եւ կրոնական գործիչների պատվիրակությունը Ամերիկայի հայ դատի գրասենյակի հետ համատեղ հանդիպել է ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի պաշտոնյաների հետ եւ կոչ է արել ամերիկյան կառավարությանը անհապաղ միջոցներ ձեռնարկել Միրիայում պատմականորեն հայկական Քեսաբ քաղաքի վրա Թուրքիայից ահաբեկիչների հարձակումներին վերջ տալու համար: Այդ մասին NEWS.am-ին հաղորդել են Ամերիկայի հայ դատի գրասենյակի մամուլի ծառայությունից:

Հանդիպման ընթացքում հայ համայնքի ներկայացուցիչներն ընդգծել են, որ Միացյալ Նահանգները պատասխանատու են Քեսաբի քաղաքացիների պաշտպանության համար, առավել եւս, որ այդ շրջանի բնակիչների ընտանիքներն

առավելապես ապրում են ԱՄՆ-ում, ձգտում են ապահովել նրանց պաշտպանությամբ ու ապաստանով:

Պատվիրակությունը ամերիկացի պաշտոնյաներին մի շարք պահանջներ են ներկայացրել, մասնավորապես հրապարակայնորեն դատապարտել «Ալ-Բաիդայի» հետ կապված ահաբեկիչների հարձակումները, Թուրքիայի ցուցաբերած աջակցությունն այդ հարձակումներին: Պատվիրակությունը նաեւ խնդրել է ԱՄՆ-ին անմիջապես հեռացնել ծայրահեղականներին, որպեսզի քաղաքացիական անձինք կարողանան վերադառնալ իրենց տները, կոչ են արել վերականգնել Քեսաբի շուրջ ապառազմականացված գոտիները:

Հայ համայնքի ներկայացուցիչներն ԱՄՆ-ից սպասում են նպատակաուղղված հումանիտար օգնություն Քեսաբից Լաթակիա տեղափոխված անձանց համար, ինչպես նաեւ խնդրում են հետաքննել Թուրքիայի կողմից խմբավորումներին աջակցության ցուցաբերումը, այնուհետեւ հրապարակել եզրակացությունները:

Հիշեցնենք, որ մարտի 21-ի վաղ առավոտյան սիրիական ընդդիմության «Ջերիաթ ան-Նուսրա» խմբավորումները չորս կողմից հարձակվեցին Լաթակիա նահանգի վրա, որը բնակեցված է հայերով ու պալեիթներով: Ահաբեկչական խմբավորումները Միրիայի վրա հարձակվել են Թուրքիայի տարածքից:

Նշենք, որ Քեսաբի հայաշատ շրջաններում իսլամիստ ահաբեկիչների դեմ գործողություն իրականացնող սիրիական ռազմական ինքնաթիռին հարվածել էին թուրքական կործանիչները:

## Մահացել է քանդակագործ Արա Շիրազը



18 Մարտի 2014թ.

Քանդակագործ Արա Շիրազն այս գիշեր մահացել է: Այս մասին HayNews.am-ը տեղեկացավ «Նաիրի» բժշկական կենտրոնի փոխտնօրեն Լուսինե Աղաբաբյանից: Նա ասաց, որ քանդակագործը ծայրահեղ ծանր վիճակում էր, ուներ գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարում. «Նրա մոտ զարգացել է պոլիօրգանային անբավարարություն»:

Հիշեցնենք, որ նրան հիվանդանոց էին տեղափոխել փետրվարի 24-ին:

Հայ քանդակագործ, ՀՀ Ժողովրդական նկարիչ Արա Շիրազը ծնվել է 1941-ին, Երևանում: 20-րդ դարի հայտնի բանաստեղծ Հովհաննես Շիրազի և բանաստեղծուհի Միլվա Կապուտիկյանի որդին է: HayNews.am

**Քեսաբահայերը պատմում էին, որ անհոգ են ապրել, մեծ ունեցվածք են ունեցել.**

**Հայ պատգամավորները վերադարձել են Սիրիայից**



**29 Մարտի 2014 թ.**

Սիրիա մեկնած հայ պատգամավորներն այսօր վերադարձել են Երեւան:

Ինչպես HayNews.am-ին տեղեկացրեց ՀՀԿ-ական պատգամավոր Նաիրա Կարապետյանը՝ իրենք պատրաստվում են մյուս շաբաթ ասուլիս հրավիրել եւ ամփոփել այցի արդյունքները: «Շատ տպավորված ենք այցելությանը, բավականին արդյունավետ այցելություն էր, ստացել ենք շատ առաջարկներ, ինքներս էլ ունենք շատ մտահոգումներ: Նախ, պետք է իրավիճակը ներկայացնենք հանրությանը, մեր ղեկավարությանը, քննարկենք առաջարկները, իմի բերենք, մշակենք կոնկրետ ծրագիր եւ սկսենք գործել: Սիրիա այցելության երեք օրերի ընթացքում մենք եղել ենք Լաթաքիայում, Դամասկոսում, Լիբանանում, հանդիպել ենք հայ համայնքի, նրանց հոգեւոր առաջնորդների, քաղաքների ղեկավարության, պատգամավորների, ինչպես նաեւ Սիրիայի նախագահի, վարչապետի եւ Ժողովրդական ժողովի նախագահի հետ»,- ասաց պատգամավորը: Նա նշեց, որ տարիանված քեսաբահայության վիճակը շատ տխուր է. «Տարիանված են, ամեն ինչ կորցրած, բոլորը պատմում էին, որ անհոգ ապրել են, մեծ ունեցվածք են ունեցել, միշտ վտանգ եղել է, բայց պաշտպանվածություն ապահովել են եւ այժմ մի քանի ժամում թողել են իրենց բնակավայրը ու եկել ապրում են եկեղեցու բակում: Դուք չեք պատկերացնի՞ ինչ տեսարան էր, եկեղեցու բակում դռակներ էին գցված, պատմություն ամ պատմություն լսել, արտասվել ենք, բոլորս լրիվ պատկերացրինք, թե ինչ է կատարվել 100 տարի առաջ, Փառք Աստծո, գոհեր չենք տվել: Միեւնույն ժամանակ, շատ հպարտ ու յիստիկ էինք, իրենց մտքում միայն Քեսաբ վերադառնայն է եւ մեզնից էլ միայն աջակցություն էին խնդրում Քեսաբը վերականգնելու հարցում»:

Հիշեցնենք, որ մարտի 24-ին ԱԺ մի խումբ պատգամավորներ մեկնել էին Լաթաքիա:

HayNews.am

**Տուն-տուն մտել են, վառել, թալանել, կրակել կենդանիների վրա, ամբողջը ջարդել եւ փշրել. Քեսաբի քաղաքապետ**



**Մարտի 27, 2014թ.**

Լաթաքիայի Աստվածածին եկեղեցում եւ հարակից տարածքում ժամանակավոր բնակատեղի են գտել Քեսաբից տարիանված մոտ 1800 հայեր՝ 600-650 ընտանիք: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ գրույցում ասաց Քեսաբի քաղաքապետ Վազգեն Չափարյանը:

Նա նշեց, որ հայերի վիճակը վատ է, նրանք ոչինչ չունեն՝ ոչ հագուստ, ոչ սնունդ, ոչ փաստաթուղթ, որովհետեւ ամբողջը մնացել է Քեսաբում:

«Լավ չեն հայերը, վատ վիճակում են, վտանգ կա, վախ կա: Տուն-տուն մտել են, վառել, պատռել, թալանել, կրակել կենդանիների՝ շների, հավերի վրա, ամբողջը ջարդել եւ փշրել, շատ վատ է: Ամեն ինչ կարիք ունեն, ոչ հագուստ, ոչ սնունդ, ոչ փաստաթուղթ չունեն, ոչ մի բան չունեն, ամբողջը մնացել է Քեսաբում Հույս ունեին, թե մեկ օրում կվերադառնան, բայց այսպես եղավ»,- ասաց քաղաքապետը: Ինչ վերաբերում է Քեսաբում ծավալված ռազմական գործողություններին, Վազգեն Չափարյանն ասաց, որ դրանից ինքը տեղյակ չէ, գիտի միայն, որ կառավարությունը պատրաստվում է: Նրանք հույս ունեն վերադառնալ Քեսաբ: Հիշեցնենք, որ մարտի 21-ի վաղ առավոտյան ահաբեկչական Ալ-Նուսա խմբավորման ջոկատները 4 կողմերից լայնածավալ հարձակման են անցել Սիրիայի հյուսիսում հայերով եւ այելիներով բնակեցված Լաթաքիայի շրջան: Թուրքիայի Հաթայ նահանգին սահմանակից Սիրիայի հայաբնակ Քեսաբի շրջանում ապրող 600 հայ ընտանիք տեղափոխվել են Լաթաքիա: Մարտի 24-ին ԱԺ մի խումբ պատգամավորներ մեկնել են Լաթաքիա:

**ԲՀԿ. Հայաբնակ Քեսաբի դեպքերի հետ կապված ԵՄ-ի լռությունն անհասկանալի է**

**Մարտի 25, 2014թ.**

Սիրիայի հայաբնակ Քեսաբի դեպքերը կազմակերպվել են Թուրքիայի կողմից, որն ահաբեկիչներ է ուղարկել հայերի դեմ: Այս մասին մարտի 25-ին լրագրողներին հայտնել է ԲՀԿ խմբակցության քարտուղար Նաիրա Չոհրաբյանը:

Ըստ նրա՝ ԵԽԽՎ-ի նստաշրջանին, որը մեկնարկում է ապրիլի 7-ին, կբարձրացվի սիրիահայերի հարցը: «Այսօր

Թուրքիան ԵՄ-ում անդամակցության է հավակնում, եւ ինձ զարմացնում է ԵՄ-ի յոռությունը: Ըստ էության՝ նույն սցենարն է իրականացվում, ինչ եւ հարյուր տարի առաջ՝ 1915թ. իրադարձությունների ժամանակ, երբ գերտերությունները յոռություն էին պահպանում թուրք իշխանությունների արյունային գործողությունների ժամանակ, իսկ ոմանք էլ աջակցում էին Թուրքիային»:

Չոհրաբյանը նշել է, որ նման դեպքերում Եվրոպան փորձում է խոսել ժողովրդավարության, մարդու իրավունքների, եվրոպական հիմնարար արժեքների մասին, սակայն նույն Եվրոպային պետք է հիշեցնել, որ նա բազմիցս խախտում է այդ արժեքները: «ԵՄ-ի բարձրաստիճան պաշտոնյաները արտահայտվում են Ուկրաինայի իրադարձությունների շուրջ: Սակայն այժմ, վերջիվերջո, նրանք պետք է ԵՄ-ում անդամակցության հավակնող Թուրքիային մետիջ ուղարկեն»:

Հիշեցնենք, մարտի 21-ի վաղ առավոտյան Սիրիայի ընդդիմության «Ջեքհաթ ան-Նուսրա» ահաբեկչական խմբավորման ջոկատները գրոհել էին հայաբնակ Լաթաքիա նահանգի վրա: Երկու խոշոր ահաբեկչական խմբավորումները Սիրիայի վրա էին հարձակվել Թուրքիայի կողմից:

**Էրդողանի հրահանգով են ահաբեկիչները հարձակվել հայկական Քեսաբի վրա. սիրիացի հրամանատար**



Մարտի 26, 2014թ.

Թուրքական Birgun պարբերականը հարցազրույց է վերցրել Սիրիայի հայաբնակ Քեսաբ ներխուժած ահաբեկիչների դեմ պայքարող Սիրիայի կառավարական զորքերի հրամանատարներից Միհրաջ Ուրալի հետ, ով ահաբեկիչների հարձակումների մեջ մեղադրել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը:

Հեռախոսով տված հարցազրույցի ժամանակ սիրիացի հրամանատար Միհրաջ Ուրալը նշել է, թե տվյալ պահին ինքը գտնվում է Քեսաբում եւ մարտնչում է Թուրքիայից ներխուժած ավազակախմբերի դեմ:

«Այս պահին բախումների կիզակետում ենք: Էրդողանի եւ իմպերիալիստների կերակրած ջիհադական ավազակախմբերի դեմ ենք պայքարում: Գող Էրդողանի կերակրած մարդասպանները հարձակվում են մեզ վրա»,- ասել է Միհրաջ Ուրալը՝ շեշտելով, որ «Այ-Կահդայի» մաս կազմող խմբավորումները հարձակվել են հայկական Քեսաբի դեմ, իսկ իրենք պաշտպանում են Թեսաբը, քանի որ այն Սիրիայի կազմում է:

Սիրիացի հրամանատարը նշել է, թե իրենք կարողացել են հետ մղել ջիհադականների հարձակումը եւ ստիպել են

նրանց հետ քաշվել եւ հավելել, որ տեղի բնակչությունն աջակցում է իրենց: NEWS.am

**Քեսաբի 600 հայ ընտանիք հեռացել են Լաթակիա**



Մարտի 24, 2014թ.

Թուրքիայի Հաթայ նահանգին սահմանակից Սիրիայի հայաբնակ Քեսաբի շրջանում ապրող 600 հայ ընտանիք տեղափոխվել են Լաթակիա: Այս մասին գրել է թուրքական T24.com.tr կայքը:

Թուրքական կայքը նաեւ գրել է, որ Լաթակիա հեռացած հայերի մեծ մասը ապաստանել են հարազատների կամ ծանոթների տներում: Իսկ 250 հոգի տեղավորվել են եկեղեցու 2 սրահներում:

Նշենք, որ մարտի 21-ի վաղ առավոտյան ահաբեկչական Այ-Նուսա խմբավորման ջոկատները 4 կողմերից լայնածավալ հարձակման են անցել Սիրիայի հյուսիսում հայերով եւ այլեւիներով բնակեցված Լաթակիայի շրջան:

Ահաբեկիչների 2 խոշոր խմբեր հարձակման են անցել Թուրքիայի տարածքից: NEWS.am

**Սիրիայի ԱԳՆ-ն պահանջել է Էրդողանի կառավարությունից դադարեցնել հայաբնակ Քեսաբում ահաբեկիչներին բացահայտ աջակցությունը**

Մարտի 24, 2014թ.

Սիրիայի ԱԳՆ-ն պահանջել է Էրդողանի կառավարությունից դադարեցնել հայաբնակ Քեսաբում ահաբեկիչներին բացահայտ աջակցությունը:

Սիրիայի ԱԳ ու էմիրատների հարցերով նախարարության պաշտոնական աղբյուրը հայտարարել է, որ մարտի 21- 22 սահմանամերձ Քեսաբ շրջանում Թուրքիայի կառավարությունը աննախադեպ ու ոչնչով չարդարացված ագրեսիա է իրականացրել Սիրիայի ինքնիշխանության նկատմամբ, որով հաստատվում է Էրդողանի կառավարության հանցավոր մասնակցությունը սիրիական ճգնաժամին՝ դրա հենց ամենասկզբից: Դա դրսևւորվում է ահաբեկիչներին բացահայտորեն սատարելով: Նրանք Սիրիա են ներթափանցում Թուրքիայի տարածքից՝ սպանելու խաղաղ բնակչությանն ու քանդելու երկրի ենթակառուցվածքը:

«Ներսիրիական գործերին թուրքական միջատությունն ապացուցում է, որ Էրդողանի կառավարության քաղաքականությունը տապալված է ու չի կարող ծառայել թուրք ժողովրդի պահանջմունքների բավարարմանը: Բազմաազգարանոց բողոքի ակցիաների մասնակիցները Էրդողանից պահանջում են հրաժարական տալ: Սիրիան

Էրդողանի կառավարությանից պահանջում է դադարեցնել ագրեսիան ու ահաբեկիչներին աջակցելը, պահպանել ՄԱԿ ԱԽ բանաձեռերը՝ հրաժարվելով ավանդուրաներինց ու թուրքական բանակը հարելան պետության դեմ օգտագործելուց»,-ասվում է Սիրիայի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցչի հայտարարությունում:

Նշենք, որ ահաբեկիչների գործողությունների պատճառով Սիրիայի հայաբնակ Քեսաբ շրջանը լքել են մոտ 670 հայ ընտանիքներ՝ ապաստանելով Լաթակիա քաղաքի եկեղեցում ու հայկական դպրոցում:

**Սերժ Սարգսյանը Քեսաբի իրադարձությունների մասին. Հայերի երրորդ տեղահանությունը լրջագույն մարտահրավեր է**



**Մարտի 24, 2014թ.**

Նախագահ Սերժ Սարգսյանը Քեսաբի իրադարձությունների վերաբերյալ Հաագայի համաժողովների կենտրոնում հանդես է եկել մամուլի համար հայտարարությամբ: Նախագահն իր խորը մտահոգությունն է հայտնել Քեսաբի շուրջ տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ: «Մենք բոլորս շատ լավ ենք հիշում Քեսաբի պատմությունը, որը վերջին հարյուրամյակի ընթացքում, ցավոք, հարուստ է հայերի տեղահանման դժոխային իրողություններով», -ասել է Սերժ Սարգսյանը:

Հանրապետության նախագահը հիշեցրել է, որ առաջին ծանր պատուհասը Քեսաբի շրջանի համար դեռևս 1909 թվականին էր, երբ ապրիլին թուրքական զինված ջոկատները ներխուժեցին Քեսաբ: Հայերն ապաստանեցին Գարատուրանի լեռներում եւ ծովեզերքում: Քեսաբը հրկիզելուց ու թալանելուց հետո թուրքերն ուղղվեցին դեպի Գարատուրան, այրեցին ու կողոպտեցին վերին թաղի տները: Հայերը ֆրանսիական փոխադրանավով տեղափոխվեցին Լաթաքիա: Գաղթականները մոտ մեկ տարի Լաթաքիայում մնալուց հետո վերադարձան Քեսաբ եւ վերակառուցեցին իրենց տները:

Պատմական իրողություններին անդրադառնալիս Սերժ Սարգսյանը հիշատակել է նաև մեկ այլ տարեթիվ՝ 1915 թվականը, երբ Հայոց ցեղասպանության գաղթից եւ արտոններից եւս անմասն չմնաց Քեսաբի բնակչությունը: Քեսաբցիներն արտոնվեցին երկու ուղղությամբ՝ դեպի Դեր Զոր եւ դեպի հարավ՝ մինչեւ Հորդանան: Հազարավոր քեսաբահայեր զոհվեցին, մեծամասնությունը՝ Դեր Զորի անապատներում:

«Քեսաբի հայերի այսօրվա՝ թվով արդեն երրորդ տեղահանությունը ազգային փոքրամասնությունների պաշտպանության 21-րդ դարի մեխանիզմներին նետված լրջագույն մարտահրավեր է: Կարծում եմ՝ բոլորը պետք է

գիտակցեն, որ ինքնըստինքյան առաջ եկող գուգահեռները սթափեցնող պետք է լինեն բոլոր կողմերի համար», -ընդգծել է նախագահ Սերժ Սարգսյանը:

Նախագահը շնորհակալություն է հայտնել Սիրիայի իշխանություններին՝ այս ծանր պահին քեսաբահայության պաշտպանության համար ձեռնարկվող քայլերի համար:

«Ես արդեն հանձնարարել եմ ՄԱԿ-ի՝ Նյու Յորքի եւ Ժնևի գրասենյակներում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններին՝ հետամուտ լինել մարդու իրավունքների եւ ազգային փոքրամասնությունների հարցերով մասնագիտացված կառույցներում Քեսաբի հայության անվտանգության երաշխավորման եւ նրանց բնակության մշտական վայրեր ապահով վերադարձի խնդիրներին», - ասել է նախագահ Սարգսյանը:

Նախագահ Սերժ Սարգսյանի հավաստմամբ, Սիրիայում Հայաստանի Հանրապետության դեսպանատունն աշխատում է քեսաբահայությանն աջակցելու համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրի վրա, որն իրականացվելու է ամբողջ ծավալով:

**Թեհրանը Թուրքիային եւ Սիրիային զսպվածության կոչ է արել**

**Մարտի 24, 2014թ.**

Իրանն իր անհանգստությունն է հայտնել Թուրքիայի եւ Սիրիայի միջեւ ռազմական լարվածության հետ կապված եւ կողմերին զսպվածության կոչ արել:

Իրանի ԱԳ փոխնախարար Հոսեյն Ամիր Աբդոլահիյանի կարծիքով իրադարձությունների ռազմական տարբերակը էլ ավելի կխորացնի կողմերի միջեւ խնդիրները եւ իրավիճակը Սիրիայի տարածքում, հաղորդում է Iran.ru-ն:

Նշենք, որ Հոսեյն Ամիր Աբդոլահիյանի հայտարարությունը պայմանավորված է միջադեպով, որի ընթացքում թուրքական ռազմական զորքերը հարվածել են սիրիական ռազմական օդանավին: Թուրքական կողմի պնդմամբ՝ սիրիական օդանավն, իբր, խախտել է Թուրքիայի օդային տարածքը: Սիրիան հերքում է այդ մեղադրանքները՝ Թուրքիայի գործողությունները որակելով որպես ագրեսիա:

**Տեսագրություն է հայտնվել, թե ինչպես են թուրքերը թուլյա տալիս ահաբեկիչներին ազատ մտնել հայաբնակ Քեսաբ**

**Մարտի 25, 2014թ.**

Թուրքական Haber.sol կայքը տեղադրել է մի տեսագրություն, որն ապացուցում այն փաստը, որ թուրքական իշխանությունների աջակցությամբ են ահաբեկչական խմբավորումները Թուրքիայից մտել Սիրիայի հայաբնակ Քեսաբի շրջան:

Haber.sol կայքի փոխանցմամբ՝ Թուրքիայից Սիրիա մտած ահաբեկչական «Ալ-Նուսրա» եւ «Իսլամի ճակատ» խմբավորման զինյալները նկարահանել են, թե ինչպես են ձեռքները թափ տալով անցնում թուրք-սիրիական սահմանակետը եւ սահմանակետում որեւէ թուրք աշխատակից չի միջամտում իրենց:

Նշենք, որ մարտի 21-ի վաղ առավոտյան ահաբեկչական Ալ-Նուսա խմբավորման ջոկատները 4 կողմերից լայնածավալ հարձակման են անցել Սիրիայի հյուսիսում հայերով եւ այլեւիներով բնակեցված Լաթաքիայի շրջան:

Ահաբեկիչների 2 խոշոր խմբեր հարձակման են անցել Թուրքիայի տարածքից:



## Թուրքիայի կողմից սիրիական օդանավը խփելուց հետո ռուսական 3 ռազմանավ շարժվում են դեպի Սիրիայի ափեր



Մարտի 24, 2014թ.

Թուրքական օդուժի կողմից սիրիական ռազմական օդանավը խփելուց հետո ռուսական 3 ռազմանավ, այսօր՝ մարտի 24-ի առավոտյան, Բոսֆորի եւ Դարդանելի նեղուցներն անցել են եւ շարժվում են դեպի Միջերկրական ծով:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Մեւ ծովից դուրս եկած ռուսական Minsk, Olengorsky եւ Kaliningrad ռազմանավերը իրար հետեւից անցել են Բոսֆորի եւ Դարդանելի նեղուցներն ու շարժվում են Միջերկրական ծով եւ Սիրիայի ափեր:

Նեղուցներն անցնելու ժամանակ ռուսական ռազմանավերին ուղեկցել են թուրքական առափնյա պաշտպանության նավերը:

Նշենք, որ մարտի 23-ի կեսօրին թուրքական կործանիչները խփել են Սիրիայի տարածքում ահաբեկիչների դեմ գործողություններ իրականացնող սիրիական ռազմական օդանավ:

## Սկանդալ. Թուրքիայի հետախուզության պետը հայտնել է, որ 2000 բեռնատար գեներ է ուղարկել Սիրիա. նոր գաղտնալսում

Մարտի 27, 2014թ.

Թուրքիայի ԱԳ նախարարի, փոխնախարարի, Ազգային հետախուզության ծառայության պետի եւ ՉՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալի միջեւ Սիրիայի հետ կապված սկանդալային խոսակցության գաղտնալսումն է հայտնվել ինտերնետում:

Secim gudumu ծածկանունը կրող օգտատիրոջ կողմից YouTube-ում տեղադրած գաղտնալսման մեջ ըստ պնդման խոսում են Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուն, փոխնախարար Ֆերիդուն Մինիրիօղլուն, Ազգային հետախուզության ծառայության պետ Հաքան Ֆիդանը եւ ՉՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալ Յաշար Գյուլերը:

Մենյակում արված գաղտնալսման մեջ Դավութօղլուն խոսում է Սիրիայի տարածքում թուրքական հող համարվող Մուլեյման Շահի դամբարանի մասին, երբ Ազգային հետախուզության ծառայության պետ Հաքան Ֆիդանը նշում է, թե հարկ եղած դեպքում ինքը 4 մարդ կուղարկի Սիրիա եւ այնտեղից 8 հրթիռ կարձակեն Թուրքիայի տարածք եւ Սիրիայի դեմ պատերազմ սկսելու հիմք կստեղծվի:

Այնուհետ Դավութօղլուն շարունակում է՝ ասելով. «պետք է 2012-ին հարձակվեինք, պետք է համարձակ որոշումներ ընդունեինք, ափսոս, որ չմտանք Սիրիա»:

Այդ ընթացքում Հաքան Ֆիդանը նշում է, թե իրենք մոտ 2000 բեռնատար գեներ են ուղարկել Սիրիա, որին հակադարձում է Յաշար Գյուլերը՝ պնդելով, թե այնտեղ ոչ թե գեների, այլ զինամթերքի կարիք կա: NEWS.am

## ՀՀ մի խումբ քաղաքացիներ պատրաստ են կամավորական ջոկատ կազմել ու մեկնել Սիրիա՝ պաշտպանելու հայաշատ բնակավայրերը

Մարտի 26, 2014թ.

Հայաստանում կան կամավորներ, որոնք ցանկություն են հայտնել կամավորական ջոկատ կազմել եւ գնալ Սիրիա՝ պաշտպանելու հայաշատ բնակավայրերը: Այս մասին այսօր՝ մարտի 26-ին, հայտարարել են ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի մոտ հավաքված մի քանի տասնյակ քաղաքացիներ, որոնք «UN stop terrorist Turkey, save kids' lives», «UN silence supports Turkey», «Քեսաբը հայտարարում է նոր ԱՄԱԼԱ-ի ծնունդ, հայտարարվում է գորահավաք» եւ նմանատիպ այլ գրություններով պաստառներով բողոքի ակցիա են անցկացրել ՄԱԿ-ի գրասենյակի մոտ՝ պահանջելով խստորեն դատապարտել Սիրիայի հայաշատ Քեսաբ շրջանում Թուրքիայի ահաբեկչական քայլերը եւ դրանց տալ համապատասխան իրավական գնահատական, իսկ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ ձեռնարկել համապատասխան միջոցներ:

«Ցանկանում ենք 20-30 հոգանոց ջոկատ կազմել: Այս մտքի մասին մենք կհայտնենք կառավարությանը: Այս ջոկատն ավելի շատ կարող է սիրիահայերին օգնել հոգեպես, որպեսզի նրանք զգան, որ իրենց հայրենակիցներն իրենց կողքին են եւ անհրաժեշտ պահին իրենց հետ կլինեն», - NEWS.am-ին ասաց նախաձեռնության անդամներից մեկը՝ Արման Մխիթարյանը:

Նրա խոսքով՝ ՄԱԿ-ի լռությունը տարօրինակ է. «Մենք ուզում ենք հիշեցնել այս կառույցին, թե ինչ նպատակների է այն կոչված ծառայելու: Մենք դատապարտում ենք ՄԱԿ-ի լռությունը: Սա հանցագործություն է: Սա լուռ համաձայնություն է Թուրքիայի արարքների հետ»:

Քաղաքացիները նամակ հանձնեցին ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, որում ասվում է. «Թուրքիան խախտել է միջազգային բոլոր օրենքներն ու պարտավորվածությունները՝ մարտի 21-ին գնդակոծելով Սիրիայում գտնվող հայկական Քեսաբ գյուղը: Սա Ցեղասպանության շարունակությունն է: Թուրքիան ձգտում է Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ իրականությունը դարձնել իր կողմից ծրագրված ոճիրը»:

Նամակը մակագրված է Հայության կողմից:

Լուսանկարը՝ ԱրսենՍարգսյանի/NEWS.am

ՆԱ ԱՍՏԴԵՐ ԵՐ ՈՐՍՈՒՄ

ՉՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ



2014 թվականի փետրվարի 21-ի լույս 22-ի գիշերը վախճանվեց Գրիգոր Գուրգաղյանը: Վաղ առավոտյան, գտնվելով հանգուցյալի բնակարանում, ես որոշ ժամանակ մնացի մահճակալի մոտ, որի վրա կանգ էր առել մեծ գիտնականի սիրտը: Եվ մտաբերեցի, թե ինչպես մի անգամ Գուրգաղյանը մի տեսակ հուզախառը եւ բավական երկար խոսեց հենց իր սրտի մասին: Ես շատ լավ եմ հիշում այդ օրը: 1998 թվականի դեկտեմբերի 18-ն էր: Չեմ պարծենում սուր հիշողությամբ: Պարզապես գիտեմ, որ այդ օրը մենք բոլորովին էլ ոչ շքեղորեն նշում էինք, ինչպես մենք էինք ասում, «Օրիոնյան հորեյանը»՝ արտամթնոլորտային «Օրիոն-2» աստղադիտարանով սարքավորված հրթիռի դեպի տիեզերք արձակման քսանհինգամյակը: Գրիգոր Արամովիչն այդ օրն ասաց, թե քառորդ դար առաջ իր սիրտն ուժգին տրոփում էր, այնքան ուժգին, որ թվում էր՝ դուրս է թռչելու կրծքից: Դա երջանիկ տրոփյուն էր: 1973 թվականի դեկտեմբերի 18-ի վաղ առավոտյան Բայկոնուր տիեզերակայանից աշխարհում առաջին անգամ Երկրի ուղեծիր դուրս բերվեց մի տիեզերանավ, որը մտավ համաշխարհային աստղագիտության եւ աստղաֆիզիկայի պատմության մեջ: Դա «Մոյուզ-13» տիեզերանավն էր: Նավի հրամանատարն էր Պյոտր Կլիմուկը, ինժեներ-օպերատորը՝ Վալենտին Լեբեդեւը: «Օրիոն-2»-ի գլխավոր կոնստրուկտորը եւ տիեզերական գիտափորձի գիտական ղեկավարն էր Գրիգոր Գուրգաղյանը:

Քսանհինգ տարի անց ես իմացա, թե այդ ինչու էր ակադեմիկոս Գուրգաղյանի սիրտը պատրաստ «դուրս թռչելու կրծքավանդակից»: «Օրիոն-2»-ի հաջող գործարկումից երկու տարի առաջ «Մոյուզ-11» տիեզերանավում տեղադրվել էր գուրգաղյանական «Օրիոն-1»-ը, որը երկարաժամկետ գործողության տիեզերական աստղադիտարան էր: Ցավոք, այդ թռիչքը ողբերգական ավարտ ունեցավ: Տիեզերանավի անձնակազմը՝ տիեզերագնացներ Դորբովոյսկին, Վոլկովը եւ Պացաւեր գոհվեցին վայրէջքի ժամանակ: Նշենք, որ օպերատոր եւ էլեկտրոնիկայի մասնագետ Վիկտոր Պացաւեր, ինչպես ինքն էր ասում, սրբազան երազանք ուներ՝ տիեզերքից վերադառնալուց հետո տեղափոխվել Հայաստան, որտեղ մտադիր էր ապրել եւ աշխատել Գառնիում, ավելի ճիշտ՝ Գառնիի աստղափոսական կենտրոնում:

Այնպես որ, կարելի էր հասկանալ «Օրիոն-2»-ի հեղինակ Գուրգաղյանի հոգու եւ սրտի վիճակը այն պահին, երբ տիեզերք էր անակվում երկրորդ տիեզերանավը, իր վրա կրելով նրա մտքի արգասիքը: Եվ ահա մեծ աստղաֆիզիկոսի, ինժեներ-կոնստրուկտորի, բառիս ուղղակի եւ փոխարեքական իմաստով իսկական ուղեւտագետի այդ սիրտը կանգ առավ նրա կյանքի 92-րդ տարում:

Երկար ու համառորեն էր պայքարում Գրիգոր Արամովիչը ծանր, եթե չասենք ահավոր հիվանդությունների դեմ: Նա կուրացավ երկու անգամ: Հազիվ էր կարողանում ձայներ ընկալել նույնիսկ լսողական սարքի օգնությամբ: Չէր լսում այն մարդը, որն իր ողջ կյանքում ծարավի էր գրույցների, վեճերի, բանավեճերի, երկխոսությունների՝ աստղերի մասին, Տիեզերքի մասին, Ղարաբաղի մասին, Հայաստանի պատմության եւ ապագայի մասին, քրիստոնեական բարոյականության մասին, պատերազմի եւ խաղաղության մասին, հայ ժողովրդի համար պառակտման վտանգավորության մասին: Չէր տեսնում այն մարդը, ում Մարտիրոս Մարյանը եւ Վիլյամ Մարյանը անվանում էին լույսի ու գույնի երգիչ, նկատի ունենալով նրա վրձնած անկրկնելի արեւաշունչ կակաչները՝ կանաչ սարերի լանջերին:

Չորրորդ հարկի մեր բնակարանների դռների միջև տարածությունն ընդամենը մեկուկես մետր է: Հաճախ էինք բարձրաձայն երկխոսությունների բռնվում: Մեր հանդիպումների մասին ես շատ եմ գրել: Ես տեսնում էի, թե ինչ անձնագոհություն է ցուցաբերում Գուրգաղյանի կինը՝ Մարիաննան, որին քույր եմ անվանում: Երկուսիս հայրերն էլ ստալինյան բռնաճնշումների գոհեր էին: Նա օր ու գիշեր խնամում էր անօգնական ամուսնուն: Ի դեպ, հաճախ էլ ուրախությամբ ծաղրում էր մեր երկխոսությունները:

Դժվար էր տեսնել, թե ինչպես է դեռեւս ոչ շատ վաղուց արագաբայ, անդադրում, անհանգիստ մարդը հանկարծ օրվա քսանչորս ժամը անցկացնում անշարժության մեջ: Ահա թե ինչ ասաց մի անգամ, չիմանալով, որ ես միշտ գրառումներ եմ կատարում. «Առաջ ես չէի սիրում երկար քնել, քանզի ինձ համար ժամանակից թանկ ոչինչ գոյություն չունի: Իսկ հիմա անընդհատ ուզում եմ քնել, որպեսզի երագում տեսնեմ տաք արեւն ու վառ աստղերը, կարմիր կակաչներն ու կապույտ երկինքը»:

«Օրիոն-2»-ի հաղթարշավից հետո Գուրգաղյանն ու իր համախոհները ձեռք զարկեցին մի նոր նախագծի, նոր տիեզերական աստղադիտարանի, այն կոչելով «Քրոմոս»: Գուրգաղյանի կարծիքով այդ ծրագիրը պետք է հիմք ծառայեր ստեղծելու յուրօրինակ գիտությունների Հայկական ակադեմիա՝ Տիեզերքում: Գործընկերներից շատերը ժայտով էին վերաբերվում բուն գաղափարին: Դրանք իմ կողմից շատ հարգված գիտնականներ էին, որոնց հետ, բնականաբար, ես ինձ թույլ չտվեցի վեճի բռնվել: Քանզի ինձ համար, որպես գրողի, չափանիշ էր բուն փաստը: Գրիգոր Գուրգաղյանն արդեն ապացուցել է եւ փառք բերել Հայաստանին: Չորս աստղադիտակներից եւ սպեկտրոգրաֆներից բաղկացած «Քրոմոս»-ի բախտն այնպես չբերեց, ինչպես «Օրիոն-2»-ինը: Եվ ասեմ անկեղծաբար. խորապես հոգուս դիպավ ոչ թե գործի

տեխնիկական կողմը, որից քիչ են հասկանում, այլ Գուրգաղյանի գրած բառերը, որպես ինչ-որ քնարական, եթե չասենք՝ հայրենասիրական շեղում. «Եթե վաղը Արարատյան դաշտավայրում խփեն նավթի բյուրավոր շատրվաններ, կամ էլ Հայաստանը, ասենք, երկրորդ Ճապոնիա դառնա էլեկտրոնիկայի գծով, ապա բոլորովին էլ չենք գարմացնի աշխարհին: Բայց եթե վաղը բոլոր երկրների բոլոր ռադիոկայանները այդ նույն աշխարհին հայտնեն, թե Երկրի ուղեծիր է դուրս բերվել հայկական արբանյակ՝ հայկական «Քրոմոս» աստղադիտարանով, ապա ողջ աշխարհը կցնցվի մեր Հայաստանով:

Երագո՞ղ: Ռոմանտի՞կ: Իսկ ինչ կա որ: Մի՞թե վատ բան է լինել թե՛ երագող, թե՛ ռոմանտիկ եւ, միաժամանակ, միջազգային հեղինակավոր գիտաժողովի ամբիոնից պաշտոնական հայտարարություն լսել, թե «Թույլ աստղերի սպեկտրայ դասակարգման ապագա են հանդիսանում միայն եւ միայն Գ.Գուրգաղյանի «Օրիոն-2» մեթոդը եւ Տիեզերք համված աստղադիտակների եւ սպեկտրոգրաֆների օգնությամբ այդ մեթոդի լայն կիրառումը»:

Այսօր, երբ արդեն կանգ է առել ականավոր գիտնականի եւ փոխտնօրինի սիրտը (եւ հավատում եմ, որ ինչ-որ ժամանակ մեր ժողովուրդը եւ ընդհանրապես ողջ մարդկությունը նորից նախկին սիրով եւ նախկին պատկառանքով կվերադառնա գրքին, որի մեջ կտեսնի աշխարհի փրկությունը եւ այնժամ կիմանա, թե փոխտնօրինական ինչպիսի աշխատություններ ունի Գուրգաղյանը), եւ ցանկանում եմ եւս մեկ անգամ մեջբերում կատարել մեր երկխոսություններից մեկից. «Ես Գուրգաղյանին հիշեցրի, որ շուտով լրանալու է նրա իննսուներորդ տարին: Նա խնդրեց Մարիանային, որ թեթևակի հարմարեցնի աջ ականջի անիծյալ, ցավ պատճառող, լսողական սարքը: Ես կրկնեցի խոսքերս հորեղանի մասին: Նա ոչինչ չասաց: Մտածեցի, թե չի լսել եւ բավական բարձր դիմեցի.

- Ասում եմ, շուտով լրանալու է իննսուներորդ տարիդ: Քո հորեղանը:

Նա գլուխը տարուբերեց, հասկացնել տալով, որ լսել է ինձ, եւ որ այդ հորեղանը բոլորովին էլ չի կարող մեր խոսակցության թեմա լինել, եւ մի տեսակ մտահոգ ասաց.

- Ավելի լավ է՝ դու ինձ պատմես, թե այսօր ինչ է կատարվում աշխարհում:

Այստեղ Մարիանան, նրան ընդհատելով, հայտնեց, թե ամենուր կռվում են, կրակում են, ջմբակոծում են:

- Այսօր ջմբակոծել են Բաղդադը,-ավելացրի ես:

Աստված իմ, ինչ կատարվեց Գրիգորի հետ: Նա երկար լռեց: Հետ գցեց գլուխը, ասես ինչ-որ բան էր կարդում այնտեղ, առաստաղի վրա: Խոր ներշնչելով՝ դանդաղ կռացավ, ջղոտ ափերով ծածկեց դեմքը եւ մատների արանքից բարձր արտաբերեց.

- Ես այնտեղ եմ ծնվել: Բաղդադում:

Այո, Գուրգաղյանը ծնվել է այնտեղ, Բաղդադում: Հրաշքով փրկված նրա ապագա ծնողները, չսված ողբերգություն ապրելով պատմական հայկական Մերաստիայում, անցել էին Տեր Չորի մոզավանքների միջով եւ օթեւան գտել Իրաքում: Տասնամյակներ անց Գրիգոր Արամովիչի որդին՝ Վահագն Գուրգաղյանը Բաղդադում այցելեց 1640 թվականին կառուցված Սուրբ Տիրամոր հայկական եկեղեցին, որի արխիվներում գտավ եգալի փաստաթղթեր, որոնց մեջ էր նաև Գուրգաղյանների ընտանիքում 1922 թվականի հոկտեմբերի 18-ին Գրիգոր անունով կնքված երեխայի ծննդյան գրառումը: Երկու տարի անց այդ ընտանիքը Հայաստան փախավ (հենց փախավ, այն է՝ նաև Արաքսի վրայով):

- Իսկ ո՞րն է քո ամենասիրելի կետը ողջ Տիեզերքում,- հարցրեցի ես:

- Գառնին,-արագ նետեց նա, ասես պատրաստ էր այդ, թվում է թե, տարօրինակ հարցին:

- Ողջ Տիեզերքում միայն Գառնի՞ն,-հարցրեցի ես:

- Ըստ էության, «Օրիոն-1»-ը եւ «Օրիոն-2»-ը մեկնարկել են ոչ թե Բայկոնուր տիեզերակայանից, այլ՝ պատմական Գառնիից: Տիեզերք թռան իմ...որսորդները:

- Ինչո՞ւ որսորդները:

- Նրա համար, որ Օրիոնը որսորդ-հսկա էր, եւ աստվածների հայր Չեւսը նրան վերածեց ամենագեղեցիկ հասարակածային համաստեղության՝ առաջին մեծության երկու վառ աստղերով եւ երկրորդ մեծության եւս երեք աստղերով: Դե, իսկ մեր «Օրիոնները», Գառնիից թռչելով Տիեզերք, վերադարձան Երկիր եւ Գառնի բերեցին աստղային հարուստ որս:

Ահա թե ինչ է գրել այդ մասին մեծ աստղագետ, տեսական աստղաֆիզիկայի հիմնադիրներից մեկը՝ Վիկտոր Համազասպի Համբարձումյանը. «Գիտափորձի ղեկավարը եւ «Օրիոն-2»-ի բոլոր հիմնական սարքերի գլխավոր կոնստրուկտորն է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Գրիգոր Գուրգաղյանը: Նա նույնպիսի համառությամբ Գառնիում իրագործեց տիեզերքից ստացված լուսանկարների մշակումը: «Օրիոն-2»-ը տվեց ոչ միայն չափազանց հետաքրքրական արդյունքներ գիտության եւ գիտական սարքաշինության համար, այլեւ մեր առջեւ դրեց բոլորովին նոր խնդիրներ, որոնց լուծման համար պահանջվում են նոր «Օրիոններ»»: Ես այս տեքստը նրա համար բարձր ընթերցեցի Մարիանայի ներկայությամբ: Գրիգոր Արամովիչը, ցավից կնճռոտվելով, ականջից դուրս քաշեց լսողական սարքի ծայրը եւ ասաց. «Այդ ամենը ճիշտ է: Մակայն եւ մենակ չէի: Ինձ հետ էին եւ՝ Կոռոյովը, եւ՝ տիեզերագնացները, եւ՝ հայ գիտնականները, եւ՝ հայկական գիտությունը եւ, իհարկե, ողջ Հայաստանը»:

Երկնային արքայություն քեզ, թանկագին որսորդ աստեղաց...

### Հայաստանից թարմ պտուղ-բանջարեղենի արտահանումը քառապատկվել է



#### 21 Մարտի 2014թ.

2014 թվականի մարտի 20-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունից, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 3312.64 –ի դիմաց, արտահանվել է 11406.03 տոննա թարմ պտուղ-բանջարեղեն:

Այն հիմնականում առաքվել է Վրաստանի Հանրապետություն- 8815.58 տոննա, Ռուսաստանի Դաշնություն- 2486.97 տոննա, Իրաք- 66.72 տոննա, Արաբական Միացյալ Էմիրություններ - 36.60 տոննա, Ուկրաինա- 0.16 տոննա:

# Աղցախ

## Ո՞ր պետություններն են զենք մատակարարում Ադրբեջանին



Ադրբեջանն սպառազինությունների հիմնական տեսակների ներկրման ծավալներով երկրորդ երկիրն է Եվրոպայում: Այս մասին նշվում է Խաղաղության հիմնախնդիրների հետազոտման ստոկհոլմյան ինստիտուտի (SIPRI) զեկույցում:

Չեկույցում նշվում է, որ 2004-2008 թթ-ի հետ համեմատ վերջին 5 տարվա ընթացքում Եվրոպայում զենքի ներկրումը 25 տոկոսով կրճատվել է, իսկ 2009-2013 թթ-ին Ադրբեջանի կողմից զենքի ներմուծումը 378 տոկոսով ավելացել է:

Նշվում է, որ վերջին 5 տարվա ընթացքում Ադրբեջանի ձեռք բերած զենքի 80 տոկոսը ներկրվել է Ռուսաստանից: Ադրբեջանին զենք են մատակարարել նաև Բելառուսը, Ուկրաինան, Իսրայելը եւ Թուրքիան:

Ըստ զեկույցի՝ սպառազինությունների հիմնական տեսակների խոշորագույն ներմուծողը Մեծ Բրիտանիան է, որն այլ երկրներից զենք ձեռք բերելու հետ մեկտեղ սպառում է եվրոպական արտահանման 12 տոկոսը: Երկրորդ տեղում, ներմուծման 12 տոկոս արդյունքով, Ադրբեջան է, երրորդը՝ Հունաստանը (11 տոկոս):

Աշխարհին զենքի հիմնական տեսակներ մատակարարող 5 խոշորագույն պետություններն են ԱՄՆ-ը (29 տոկոս), Ռուսաստանը (27 տոկոս), Գերմանիան (7 տոկոս), Չինաստանը (6 տոկոս) եւ Ֆրանսիան (5 տոկոս):

Չեկույցը պարունակում է 2009-2013 թթ-ի եւ 2004-2008 թթ-երի ընթացքում աշխարհի մի շարք տարածաշրջաններում զենքի ներմուծման եւ արտահանման հարցերով համեմատական վերլուծություն:

## Փորձագետ. Կովկասի պարսիկները մտադիր են Ադրբեջանում իրենց պետությունը ստեղծել

Մարտի 18, 2014 թ.

Ադրբեջանում բնակվող թաթերը (կովկասյան պարսիկներ) հավակնում են Շիրվանի Պարսկական Հանրապետություն ստեղծմանը: Այս մասին, այսօր՝ մարտի 18-ին, մամուլի ասուլիսում նշել է ԵՊՀ արեւելագիտության ամբիոնի դոցենտ Վարդան Ոսկանյանը:

Փորձագետի խոսքով՝ այդ նպատակով թաթերը ստեղծել են «Շիրվանի ազատագրման ճակատը», որը Բաքվի ռեպրեսիվ

քաղաքականության պայմաններում ընդհատակյա պայքար է մղում:

Կազմակերպության այլ խնդիրների շարքում Ոսկանյանը նշել է Ադրբեջանի կողմից «Ֆարսի» անվանման ճանաչումը որպես կովկասյան պարսիկների միակ ընդունելի էթնիկ անվանում՝ թուրքական «թաթ» կամ «դաղը» անվանումների փոխարեն, պարսկերենին Շիրվանի տարածքում հիմնական պետական լեզվի կարգավիճակ տալը, ինչպես նաև պարսիկ ժողովրդի նկատմամբ խտրական եւ ձուլման քաղաքականության դադարեցումը: Լրագրողների հետ հանդիպման վերջում Ոսկանյանը նշել է, որ մայիսի կեսերին Երեւանում տեղի կունենա թաթագիտությանը նվիրված առաջին միջազգային կոնֆերանսը:

# Արեւմտյան Հայաստան

## Վանի Աղթամարը, Յամշենի հովիտները եւ Նեմրուշ լեռը՝ Թուրքիայի ամենակարելոր տեսարժան վայրեր

Մարտ 19, 2014թ.




